

«Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագիծ

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Զ Ը

«ԸՆՏԱՆԻՔՈՒՄ ԲՈՒՈՒԹՅԱՆ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ, ԸՆՏԱՆԻՔՈՒՄ ԲՈՒՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿՎԱԾ ԱՆՁԱՆՑ ԴԱՇՏԴԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԸՆՏԱՆԻՔՈՒՄ ՀԱՄԵՐԱՇԽՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» 2017 թվականի դեկտեմբերի 13-ի ՀՕ-320-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 7-րդ հոդվածի 11-րդ մասում լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասություն՝

«Սույն հավելվածի 3-րդ մասի 1-ին, 2-րդ և (կամ) 3-րդ կետերով նախատեսված սահմանափակումների կիրառմամբ կայացված անհետաձգելի միջամտության որոշումների կատարման նկատմամբ հսկողությունը ոստիկանության կողմից կարող է իրականացվել նաև Էլեկտրոնային հսկողության միջոցների կիրառմամբ: Էլեկտրոնային հսկողության միջոցների կիրառման և ֆինանսավորման կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը: »:

Հոդված 2. Օրենքի 8-րդ հոդվածի 9-րդ մասում լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասություն՝

«Սույն հավելվածի 5-րդ մասի 1-ին, 2-րդ, 3-րդ և (կամ) 6-րդ կետերով նախատեսված սահմանափակումների կիրառմամբ կայացված պաշտպանական որոշումների կատարման նկատմամբ հսկողությունը ոստիկանության կողմից կարող է իրականացվել նաև Էլեկտրոնային հսկողության միջոցների կիրառմամբ: Էլեկտրոնային հսկողության միջոցների կիրառման և ֆինանսավորման կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը: »:

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը: